

ՀԻՆ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Երևանի պետական համալսարան

Դասընթացի ծրագիր

Ֆակուլտետ՝ Արևելագիտության

Ամբիոն՝ Թյուրքագիտություն

դասընթաց՝ *Հին թյուրքական հուշարձաններ*

Որակավորման աստիճան՝ մագիստրատուրայի կրթական ծրագիր

Հեղինակ՝ Լուսինե Խաչատրյան, ք.գ.թ., ասիստենտ

Դասընթացը վարողի մասին տվյալներ

Դասընթացը վարում է՝ բանասիրական գիտությունների թեկնածու, թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ Լուսինե Խաչատրյանը: Փոստային հասցեն՝ Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1, Երևանի պետական համալսարան, արևելագիտության ֆակուլտետ, թյուրքագիտության ամբիոն, էլ. փոստի հասցեն՝ lusine.erevan@gmail.com

Կայքը համացանցում՝ <http://yerevan.academia.edu/LusineKhachatryan/>

Աշխատանքային հեռախոսները՝ 060 710 580

Խորհրդատվությունների օրերը՝ նախնական պայմանավորվածությամբ

Ակադեմիական կենսագրությունը՝

2013թ. բանասիրական գիտությունների թեկնածու

2004-2010թթ. ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի հայցորդ

1990-1995 ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ուսանող

Աշխատանքային փորձը՝

2014 թ.-ից ցայսօր ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ

2003-2014թթ.- ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի դասախոս

Դասավանդվող այլ առարկաներ՝ թուրքերեն, հին թյուրքական հուշարձաններ

Հետազոտական ուղղությունը՝ հին թյուրքական շրջանի բառապաշար, թյուրքական լեզուների պատմություն

Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ հին և միջնադարյան թյուրքական ձեռագրերի ուսումնասիրություն, հայատառ թուրքերեն:

Դասընթացի նպատակը

Դասընթացը նախատեսված է արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության բաժնի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողների համար: Դասընթացի հիմնական նպատակն է՝ ուսանողներին տալ թուրքերենի վաղ շրջանների մասին ընդհանուր պատկերացում և ծանոթացնել վաղ և միջնադարյան շրջանի գրավոր հուշարձաններին:

Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- պատկերացում կկազմի թյուրքական լեզուների ծագման և դրանց առանձնահատկությունների մասին
- կդրսևորի թյուրքական պարզ տեքստեր թարգմանելու կարողություն
- կկարողանա կարդալ հին թյուրքական պարզ տեքստեր
- կցուցաբերի թյուրքական լեզուների տարբեր ճյուղերի տեքստերի ընթերցման որոշակի հմտություններ

Դասընթացի նկարագիր

Դասիչ	Կրեդիտ քանակ	Լսարան. ժամ	Ընդհ. ժամ.	Ինքն. ժամ.	Շաբաթ. ժամ	Կիսամ.
1803	3	32	90	58	2	3

Դասավանդման և ուսումնառության ձևերը

Դասընթացի տևողությունն է 1 կիսամյակ: Դասընթացը բաժանված է 2 ուսումնական հատվածի, որոնցից յուրաքանչյուրի ավարտին նախատեսված է ընթացիկ (միջանկյալ) քննության հանձնում: Դասընթացը բաղկացած է դասախոսություններից:

Դասաբաշխման սանդղակը ըստ թեմաների և պարապմունքի ձևերի

1 Առարկայի թեմաներ	միայն ակադ/ ժամ	դասախ ակադ/ ժամ	սեմին. ակադ/ ժամ	աշխ. այլ ձևեր ակ/ ժամ

Մաս 1	32			
Մոդդերենով վկայված Թյուրքական հուշարձաններ և կոթողներ :		2		
Թյուրքական գրերի հայտնաբերումն ու դրանց վերծանումը:		2		
Թյուրքական գրերի առանձնահատկությունները և դրանց ծագման տեսությունները:		2		
Հին թյուրքերենի այբուբենը:		4		
Ենիսեյան գրավոր հուշարձանները:		4		
Օրհոնյան գրավոր հուշարձանները:		4		
Ույղուրյան գրեր. XI դարի գրավոր հուշարձանները (Կարախանյան շրջանի հուշարձաններ):		2		
Բալասագունցի Հաս Հաջիր Յուսուբի հեղինակած Kutatgu Bilig (Երջանկաբեր գիտելիքներ) բարոյախրատական ստեղծագործությունը:		2		
Քաշգարցի Մահմուդի Divanü Lugati't-Türk բազմալեզու բառարանը:		2		
Թյուրքական լեզուների արևմտյան ճյուղի զարգացումները: Մելջուկյան թուրքերենը և դրանով ավանդված գրավոր հուշարձանները:		2		
Մամլուքյան դփչաղերենի հուշարձաններ Tercümân-î Türkî ve Arabî ve Moğolî/-թյուրքերեն-արաբերեն -մոնղոլերեն բառարան/ և այլ գրավոր հուշարձաններ		2		
Օղուզերենով ավանդված հուշարձաններ ` Oğuzname-ն և Dede Korkut Kitabı-ն:		2		
Չաղաթայերենի (հին ուզբեկերենի)		2		

գրավոր հուշարձաններ				
Ընդամենը		32		

Բաժինների և առարկայական թեմաների բովանդակությունը

1. Ներածական դասախոսություն թյուրքագիտության որպես առանձին գիտական դիսցիպլինայի ձևավորման շուրջ: Հին թյուրքական կոթողների՝ բալբալների և «եղջերավոր» քարերի մասին, ինչպես նաև Կենտրոնական Ասիայի տարբեր շրջաններում հայտնաբերված դամբարանների և դրանց հետ կապված հնագիտական աշխատանքների մասին:

2.Հին Թյուրքական գրեր. դասախոսություն թյուրքական գրերի հայտնագործման պատմության շուրջ, ովքեր էին առաջին հայտնագործողներն ու վերծանողները:

3.Հին թյուրքերենի այբուբենը. դասախոսության ընթացքում կներկայացվեն այբուբենի գրանշանները և առանձնահատկությունները:

4.Ենիսեյան հուշարձաններ: Կներկայացվեն Ենիսեյ գետի ավազանում հայտնաբերված հուշարձանները մասնավորապես «օնգինյան քար» կոչված գրավոր հուշարձանն ու դրա բովանդակությունը:

5.Օրհոնյան հուշարձաններ: Այս դասաժամի համար նախատեսված է ներկայացնել Օրհոն գետի ավազանում հայտնաբերված Բիլգե Կագանի և Տոնյուկուկի հուշարձանները: Ծանոթացնել դրանց բովանդակությանը և թարգմանության տարբերակներին:

6.Ույդուրյան գրեր: Դասախոսություն ույդուրյան գրերի ծագման՝ դրանցով վկայված փաստաթղթերի մասին, ինչպես նաև դրանց կիրառության և թյուրքական մշակույթում ունեցած դերի մասին:

7.Բալասագունցի Հաս Հաջիբ Յուսուբը և նրա հեղինակած Kutatgu Bilig ստեղծագործությունը: Դասաժամի ընթացքում ուսանողները կծանոթանան թյուրքական մշակույթի համար չափազանց կարևոր բարոյախրատական կրոնական բնույթ ունեցող այս ստեղծագործության բովանդակությանը: Կներկայացվեն ստեղծագործության լեզվաճական առանձնահատկությունները:

8.Քաշարցի Մահմուդ. Divanü Lugati't-Türk. Մահմուդ Քաշարցու 1077 թ.-ին գրած վերոհիշյալ Divanü Lugati't-Türk-ը, հիրավի ժամանակաշրջանի ամենահիմնարար ստեղծագործություններից մեկն է: Մա, ըստ էության, թյուրքական «խոսվածքների» կամ «բարբառների» համեմատական գուգադրական ուսումնասիրության առաջին փորձն էր և արտահայտում էր կենդանի ժողովրդական խոսքը:

9.Թյուրքական լեզուների արևմտյան ճյուղը. Թյուրքերենի արևմտյան ճյուղը սկսում է ուրվագծվել XII դարում: Այս ժամանակաշրջանում հետզհետե հզորացող օղուզական ցեղերը սելջուկների գլխավորությամբ կամաց-կամաց ուժեղացնում են իրենց ազդեցությունը Փոքր Ասիայի հարավարևմտյան մասերում: Այսպիսով՝ Կասպից ծովի հարավից արևմուտք տարածվող թյուրքերենն անվանվել է «արևմտյան թյուրքերեն»: Դասախոսության ընթացքում

կներկայացվեն սելջուկյան թյուրքերենի՝ օղուզերենի զարգացման փուլերը և դրանց առանձնահատկությունները: **Սելջուկյան թյուրքերեն:** Այս թեմային նվիրված դասախոսության ընթացքում կխոսվի սելջուկյան ժամանակշրջանի ստեղծագործությունների և դրանց լեզվաոճական առանձնահատկությունների մասին:

10. Մամլուքյան դփչաղերեն: XIII դարի մոնղոլական արշավանքների արդյունքում Սիրիա և Եգիպտոս գաղթած դփչաղները խոսում էին մամլուկյան դփչաղերենով (Memlûk Kıpçakçası): Հենց այս շրջանում են գրվել այնպիսի ստեղծագործություններ, ինչպիսիք են Tercümân-î Türkî ve Arabî ve Moğolî-ն (1245 Եգիպտոս), Kitâbü'l idrâk li Lisâni'l Etrâk-ը (1312, Կահիրե), Ettuhfetü'z Zekiyye fi'l-lugati't-Türkiyye -ն (1425, Եգիպտոս), Kitâbü bulgati't-müştak fi'l-lugati't-Türk ve'l Kıfçak-ը (Սիրիա, 1451), Baytarü'l-vazih-ը, Kitâb fi Riyazatü'l-Hayl-ը, Kitâbü fi ilmi'n-Nüşşab-ը և Münyetü'l-Guzat-ը և շատ այլ ստեղծագործություններ:

11. Դեստանից էպոսի անցման փուլի առաջին ստեղծագործություններից են Oğuzname-ն և Dede Korkut Kitabı-ը: «Քորքութ Աթա» կամ «Դեղե Քորքութ» (*Kitab-ı Dedem Korkut alâ lisan-ı Taife-î Oğuzan*) էպոսը, որտեղ պատմվում է ինչպես հույների, հայերի ու վրացիների, այնպես էլ իսլամ ընդունած ցեղերի՝ գերբնական արարածների դեմ վարած պատերազմների ու ներքին բախումների մասին: Այն հավանաբար գրի է առնվել XIV դ. վերջից XVI դ. սկիզբն ընկած ժամանակաշրջանում: Դրեզդենում պահվող ձեռագիրն ամփոփում է 12 էպիկական պատում (հերոսական դեստան), վատիկանյանը՝ 6 պատում, որոնք տեղեկություններ են պարունակում օղուզների կրոնական հավատալիքների, հասարակական ու տնտեսական կյանքի, պետական կառուցվածքի մասին: Թուրք մասնագետները կարևորում են Օրհան Շաիք Գյոքայի (1973թ.), Մուհարրեմ Էրզինի (1955 – 1963թթ.) ինչպես նաև Բեքիր Մամի Օզսոյի (2006 թ.) աշխատասիրությամբ հրատարակությունները¹: Օղուզ Նամեն օղուզ թյուրքերի և նրանց լեզենդար նախահայր Օղուզ խանի մասին 12 ասքից բաղկացած էպիկական հուշարձան է: Պահպանվել են միջնադարում գրված մի քանի ձեռագրեր (Փարիզում պահպանվել է 15-րդ դարի ձեռագիր): Դրանցից ամենահինը համարվում է 13-14 դդ.-ի կառուկաույդուրական ձեռագիրը: Խիվայի խան Աբուլգազին 17-րդ դարում ստեղծել է էպոսի մուսուլմանական տարբերակը:

12. Չաղաթայերենով կամ հին ուզբեկերենով ստեղծված գրավոր հուշարձաններ: XIV-XX դարերում Կասպից ծովի արևելքում խորեզմյան թյուրքերենի ավանդույթները շարունակող չաղաթայան թյուրքերենով են ստեղծագործել Սեքքաքին, Էմինին, Լյութֆին, Հյուսեին Բայքարան, Բաբուր Շահը, Ալիշեր Նավոյին և Աբուլ Գազի Բահադըր Խանը: Դարաշրջանի լեզվական առանձնահատկությունները հիանալիորեն արտահայտված են Ալիշեր Նավոյի ստեղծագործություններում: Լեզվի պատմության ուսումնասիրության տեսանկյունից բացառիկ կարևորվում են աշխարհահռչակ բանաստեղծի թե՛ Mecalisü'n-Nefâis («Ընտիր երկեր») և թե՛ Muhakemetü'l-Lugateyn («Երկու լեզուների ուսումնասիրություն») և թե՛

¹ Այս մասին ոռու. հրատ. տե'ս.

Գրականության ցանկ

Գրականությունը հասանելի է ԵՊՀ գրադարանից, ԱԱ հիմնարար գրադարանից, Ազգային գրադարանից ինչպես նաև համացանցից: Որոշ նյութեր կտրամադրվեն դասավանդողների կողմից:

1. Книга моего деда Коркута, М. – Л., 1962, (с критич. Статьями В.В. Бартольда, А.Ю. Якубовский и В. М. Жирмунского):
2. Родословное древо тюрков (Исследования, тексты, перевод), Саблуков Г. С., Каз., 1906.
3. Родословная тюркмен. Сочинение Абу-ль-Гази, хана Хивинского, Москва-Ленинград, 1958:
4. Özsoy B. S., *Dede korkut kitabı*, Ankara, 2006.
5. Маҳмуд Кошғарий, *Девону луғотит турк*, Уч томлик / Таржимон ва нашрга тайерловчи Муталлибов м., Тошкент, 1960-1963, т. III. 461 стр.
6. Малов С.Е., *Памятники древнетюркской письменности*, М.-Л., Изд-во АН СССР, 1951, 450 стр.
7. Наджип Э.Н., *О средневековых литературных традициях и смешанных письменных языках*, СТ, Алма-Ата, 1970, н. 1, стр. 87 - 92.
8. Гузев В.Г. “Краткий обзор исследований по языку тюрков Малой Азии 13-14 вв.”, “Тюркологический сборник” 1972, стр. 69-92.
9. Бартольд, В. В., Сочинения, т. 5, М.: Наука, 1968, 1029стр.
10. Баскаков А.Н., *Введение в изучение тюркских языков*, Москва, “Высшая школа”, 1969. 383 стр.
11. Григорев В. В., *Караханиды в Маверанагре по Тарихи Мунедджим – башы*, СПб., 1874, 70 с.

Դասընթացի օրացույց

Դասընթացը նախատեսված է իրականացնել աշնանային/գարնանային կիսամյակի ընթացքում, շաբաթական չորս ակադեմիական ժամով: Դասընթացի օրացույցը համաձայնեցված է Երևանի պետական համալսարանի կողմից ընդունված ժամանակացույցի հետ:

Ստուգման և գնահատման եղանակները

Ուսանողների գիտելիքների վերջնական գնահատման ձևերը

Մասնակցության աստիճանը (%)	Հատկացվող միավորը
81-100	2
61-80	1
60 և պակաս	0

Ուսումնական այս մոդուլից ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը (Գարդ.) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝ ա) դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանից, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 2 միավոր, բ) 2 ընթացիկ (միջանկյալ) քննությունների (գրավոր աշխատանք) արդյունքներից (Քընթ.), որոնց հատկացվող միավորների առավելագույն քանակը սահմանվում է 4: Առաջին ընթացիկ քննությունը բաղկացած է չորս հարցերից: Յուրաքանչյուր առաջադրանքի ստուգման արժեքը գնահատվում է 1 միավոր, իսկ գնահատման քայլն 0,5 է: Երկրորդ ընթացիկ քննությունը բաղկացած է չորս հարցերից: Յուրաքանչյուր առաջադրանքի ստուգման արժեքը գնահատվում է 1 միավոր, իսկ գնահատման քայլն 0,5 է: Եզրափակիչ քննությունը գնահատվում է 10 միավոր և բաղկացած է 4 առաջադրանքից՝ երկու քերականական յուրաքանչյուրը 2 միավոր, թուրքերենից հայերեն և հայերենից թուրքերեն թարգմանություն՝ յուրաքանչյուրը 3 միավոր: Դասընթացի արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$\text{Գ արդ.} = \text{Գմաս.} + \Sigma\text{Քընթ.} + \text{Քեզր.} :$$

Ըստ այդմ, դասընթացն ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով).

Գնահատման բաղադրամասը	Գմաս.	Քընթ.1	Քընթ.2	Քեզր	Գարդ
Միավորը	2	4	4	10	20

Գնահատման սանդղակը և նշագրումը

Ըստ ԵՊՀ-ում ընդունված կարգի՝ ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 20 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

Գնահատման արդյունարար միավորը	Գնահատականը
18-20	Գերազանց
13-17	Լավ
8-12	Բավարար
0-7	Անբավարար
0	Չներկայացած
-	Ստուգված/Չստուգված

8-ից ցածր արդյունարար միավոր ստացած կամ Չստուգված գնահատված ուսանողին, կրեդիտներ չեն տրվում: